ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԸ ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայրս՝ Դավիթ Փափազյանը (ծն. Վան, 1854 թ.) պատանեկան տարիքից ներգրավված է եղել Վանում ծավալված ազգային-ազատագրական շարժման մեջ և ինչպես Հ. Սերինգյուլյանի (Վարդգես) ու Վ. Փափազյանի (Կոմս) օրոք և հատկապես Արամ Մանուկյանի ղեկավարության շրջանում, համարվել է Վանի «Նոր սերնդական» շարժման գործունյա անդամներից մեկը։ Ե՛վ Արամը, և՛ նրա դինակիցներ Վռամյանն ու Իշխանը նրա ամենամոտ կուսակցական ընկերներն են եղել։ Նա մասնակցել է Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտին՝ գրաղեցնելով «Զինարաշխ մարմնի» նախագահի պատասխանատու պաշտոնը։ Վանի առաջին հայկական կառավարության օրոք Արամի հրամանով նշանակվել է Վանի ոստիկանապետ։ Վանպուրականի մեծ գաղթից հետո Բարվում Թիֆլիսում և այլուր ղեկավարել է գաղթականական կոմիտեների աշխատանքը և թղթակցել «Դրոշ» ամսագրին և «Тифлисский листок» թերթին։ 1920 թ. դեկտեմբերին հաշակել է բոլշևիկյան բանտերի դառնությունը և երաշխավորությամբ ազատվելով, անմիջապես մասնակցել է փետրվարյան ապստամբությանը և ապա «Փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանի հրամանով 1921 թ. մարտի 4-ին նշանակվել Երևան քաղաքի միլիցապետ։ Կարճատև այս պաշտոնավարությունը ընդհատվել է բոլշևիկյան իշխանության վերականգնումով, որից հետո բազմաթիվ այլ տարագիրների հետ անցել է Իրան և հաստատվել Թավրիզ քաղաքում։

Անցյալ տարի, երբ ես, որպես Իրանագետների միջազգային կոնգրեսի նախագահության անդամ հրավիրված էի մասնակցելու Թեհրանում դումարված առաջին համագումարի աշխատանքներին, ինձ հաջողվեց գտնել հորս անձնական արխիվը, որտեղ կան բավական անվանի անձնավորությունների (Վ. Փափազյան (Կոմս), Վ. Նավասարդյան, Ռ. Տեր-Մինասյան, Ս. Վրացյան և այլն) նամակներ և նրանց հացնագրված պատասխան նամակների պատճեններ։ Այդ արխիվում, սակայն, պահպանվել է նաև անվանի մշակութային և հասարակական-քաղաքական գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի 1906 թ. գրված նամակը՝ ուղղված իր երիտասարդության շրջանի պալատհայ ընկեր Միհրան Բաղդասարյանին, որն այդ տարիներին ուսուցիչ էր Մարաղայի հայոց դպրոցում։ Նա չափազանց զարգացած, բարի համբավի տեր մի անձնավորություն էր, որ 1920—30-ական թթ. ընակվում էր Թավրիզում, մեր տան հարևանությամբ։ Այս նամակը նա տվել է, որպեսզի հայրս ծանոթանա Վանում ժամանակին մեծ կրթական և լուսավորական գործունեություն ծավալած անձնավորության գիրքորոշման հետ՝ Վանի «Արմենական» կուսակցության նկատմամբ։

Կարծում եմ, որ նամակը կարող է օգտակար լինել նշված ժամանակաշրջանի մեր ազգային-ազատագրական շարժման պատմության ուսումնասիրությամբ զբաղվող պատմաբաններին, առավել ճշգրիտ պատկերացում կազմելու համար Մ. Փորթուգալյանի և «Արմենական» կուսակցության փոխհարաբերությունների մասին, և համոզվելու, որ բացահայտ սխալ է նրան համարել այդ կուսակցության «հիմնադիր և ղեկավար» (Հայկական հանրագիտարան, հ. 12, էջ 364)։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

Մարսելլ, սեպտ. 21/4 հոկտեմբեր 1906

Մեծապատիվ
Տիար Միհրան Պաղտասարյան
Մարաղա

Սիրելի հայրենակից և բարեկամ,

Մեծ ուրախությամբ և շնորհակալությամբ ստացած եմ անցյալ տարի մարտ 29-ին Ձեր գրած նամակը, որ ընտանիքիս մոտ ալ կարդացի և ամենքն

---

1 *Այս սխալ տեսակետի հերքումով վերջերս հանդես է եկել նաև Ա. Հ. Կարապետյանը (տե՛ս «Երարեր հասարակական գիտություններից», 1993, № 2, էջ 8—12)։*

ալ գոհ եղան Ձեր ընտանեկան ուրախարիթ լուրերն իմանալով, մանավանդ օրիորդ Աստղիկին այդտեղ ամուսնացած լինելը շնորհալի և ազնիվ երիտասարդի մը հետ։ Միայն թե տխրեցա Ձեր աներոջ՝ Հայրապետ Աղայի մահն իմանալով, որ Կ. Պոլսի մեջ ամենեն առաջ ճանչցած վանեցիներես մին էր, Ազգային երեսփոխանական ժողովի վեճերին պատճառով եղած ցույցերին իր մասնակցությամբ։

Մեր ընտանեկան վիճակն ալ զանազան փոփոխություններ կրած է այստեղ. Թյուրքիա ունեցած երկու զավակներս ալ մեռան այստեղ. անդրանիկ աղջիկս, Արմենուհին, որ Եվդոկիա ծնած էր և Վան բերած էի, 17 տարեկան հասակին մեջ մեռավ այստեղ. Տիգրանս ալ, որ Վան ծնած էր և 2 ամսական եղած ատեն այստեղ բերված, 7 տարեկան հասակին մեջ մեռավ։ Այժմ ունիմ 2 մանչ և 4 աղջիկ զավակ, որոնք ամենքն ալ Մարսելլ ծնած են։ Ամենեն մեծը, Վահանս, 19 տարեկան է այժմ և մեկ տարի հետո պետք է զինվորագրվի, որովհետև ֆրանսիական օրենքին համեմատ ամեն ֆրանսացի պետք է որ զինվոր լինի. զինվորական գործոն բանակին մեջ ծառայությունը կը տևե երկու տարի. այնուհետև կարձակվի և պահեստի զորքերի շարքին մեջ կը նշանակվի։ Այստեղ լիսեին ընթացավարտ եղած է Bachelier-ի դիպլոմով. բայց որովհետև հայոց վարժարան չկա Մարսելլ (քանի մը տուն միայն հայ կա այստեղ) և ես ալ այնչափ ճնշված եմ զբաղումների ծանրության տակ, որ ժամանակ չեմ կրնար գտնել իրեն հայերեն դասեր տալով զբաղելու, անցած տարի ղրկեցի էջմիածին Գեորգյան ճեմարանը հատկապես հայերեն սովրելու համար. այս օրեր վերադարձավ անկե և կը տեսնեմ որ բավական հառաջադիմություն ունեցեր է։

Ես շատ ցավ զգացի Ձեր նամակի մեջ կարդալով, որ Ձեզ դեմ հալածանքներ և մինչև իսկ մահի սպառնալիքներ եղեր են այն պատճառով, որ Դուք ազգային խնդիրների մասին այդ սպառնացող պարոններեն տարբեր կերպով կը մտածեք եղեր։ Գիտեք որ ես կարծիքի ազատության ջերմ բարեկամ եմ, թեև իմ համոզումներս ալ ջերմորեն կը պաշտպանեմ և կաշխատիմ տարածել։ Եթե կարծիքի տարբերության համար իրար հալածել, իրար սպաննել հարկ լիներ՝ ո՞վ կրնար ուրեմն ապրելու իրավունք ունենալ. որչափ մարդիկ, այնչափ կարծիք, կրսե առած մը և նույնը կը հասատտե իրականությունը։ Ցավալի է, որ հրապարակի վրա ազատության պաշտպան հանդիսացողներ իրենք կելնեն ուրիշների մտածելու ազատությունը բռնաբարել և մահի սպառնալիքով ստիպել որ իրենց պես միայն մտածեն։

Ձեր նամակի մեջ նախկին ԱՐՄԵՆԻԱՆ բառը դործածված կը տեսնեմ անձի մը համար, որի հետ բնավ հարաբերություն ունեցած չեմ Արմենիան։ Շփոթության տեղի չտրվելու համար այս ալ հայտնեմ, որ ես երբեք ճանչցած չեմ «Արմենական» անունով կազմակերպություն մը, երբեք պաշտոնական հարաբերություն մը ունեցած չեմ այդ անունով կազմակերպության մը հետ։ Վանի մեջ մի խումբ երիտասարդներ կազմակերպվեր են ինքնապաշտպանության համար Մ. Ավետիսյանի առաջնորդության տակ և որովհետև Ավետիսյանի հետ մեկտեղ մեր ուրիշ աշակերտներ և համակիրներ ալ դտնըված են որոնց մեջ, դրսեցի հեղափոխականներ (Հնչակյաններ և Դաշնակցականներ), «Արմենական» կոչեր են այդ Վանեցիների խումբը, անոնք ալ սիրեր են այդ անունով կոչվիլ. Ավետիսյան ղիջանելով իրեն հետևորդների մեծ մասի ցույց տված այդ փափագին (քանի որ կոտորածին մոտիկ և եռուզեռի ատենն էր, այդպիսի երկրորդական խնդրով մը այդ միջոցին չծանրանալու համար), պայման դրեր է, թե քանի որ «Արմենական» անունը վրանին առած են, պետք է իրենց կազմակերպության ծրագիր ղրկվի Արմենիայի խմբագիրտնորենին և անոր հավանությունն ալ ստացվելով իրմե վավերացվի։ Ավետիսյան այդ ծրագիր և անոր հետ իր մեկ նամակ կը ղրկե Պարսկաստան, որ անկե փոստի միջոցով հասցունեն ինձ. բայց Պարսկաստան գտնվող իրենց ընկերներ անհոգությամբ թե հետին մտքով կը պահեն այդ նամակ և չեն ղրկեր ինձի։ Քիչ հետո Վանի կոտորածը պատահեցավ և Ավետիսյան ու իր

ուղեկիցներ նահատակվեցան, ինչպես դիտեք, Աղբակի Ս. Բարթողիմեոս վանքի մոտեր։ Քիչ ժամանակ հետո, Ներսես Գրիգորյան անուն Վանեցի երիտասարդ մը, որ ժամանակ մը աշակերտած է մեր Կեդրոնական վարժարանի մեջ, Եվրոպա կու գայ, նախ Պուլկարիա անցնելով և կը սկսի շրջաբերականներ հրատարակել «Արմենական» կազմակերպության մը անունով, որ իբր թե կապ ունի եղեր Արմենիա լրագրին հետ. իրենց շրջաբերականների մեջ այնպիսի միաքեր կը հայտնեն, որոնց դեմ կը գրեր արդեն Արմենիան։ Ես սարսափելս Արմենիայի մեջ հոդված մը հրատարակել «Զգուշություն» վերնագրով և հայտարարել, թե մենք այդ անունով կազմակերպություն մը բնավ չենք ճանչնար և ոչ ոք իրավունք չունի Արմենիայի անունով կազմակերպություն մը ներկայացնելու ժողովրդին։ Արժ. Տ. Գեորգ քահանա Օտյան, մեր նախկին աշակերտներեն մին և այժմ հանգուցյալ, որի ձեռքն անցած է եղեր վերջապես Ավետիսյանի ինձ գրած նամակն ու Արմենական կազմակերպության ծրագիրն (որը Ներսես Գրիգորյան Սայմաստ թողած և ինձ չէր ղրկած), այդ «Զգուշություն» վերնագրով հոդվածս կարդալե հետո, Ավետիսյանի նամակն, որով ուղած էր իմ հավանության ու վավերացման ենթարկել «Արմենական» անունով կազմակերպության ծրագիրը, փութաց ղրկել ինձի և եղելությունը բացատրել։ Այդ միջոցներ Մարսելյ եկավ և վերոհիշյալ Ներսես Գրիգորյան՝ որին բացատրեցի թե ապօրինություն, պաշտպանություն է Արմենիայի անունով կազմակերպություն մը ինքնին ելնել ներկայացունել ժողովրդին, առանց Արմենիայի անօրենի գիտության և վավերացման և թե ոչ մեր սկզբունքին և ոչ ալ Եվրոպական սովորության և ոչ իսկ Թյուրքիայի հայերի սովորության, կը համապատասխանե լրագրի անունով կուսակցություն կազմակերպելը. Անգլիայի մեջ կա պահպանողական կուսակցություն, ազատական կուսակցություն և ոչ թե Ստանդարտյան կուսակցություն, Տեյլինյուսյան կուսակցություն, թեև Ստանդարտը պահպանողական և Տեյլի նյուսը ազատական կուսակցության բերան եղող լրագիրներ են։ Գնացեք աշխատեցնեք առանց Արմենիայի անունը վրանիկ առնելու, ըսի Ներսեսին, եթե լավ բան անեք, Արմենիան կը համակրի Ձեր արածին. իսկ եթե գեշ բան անեք, Արմենիան հակակիր կը լինի Ձեզ. նույնիսկ եթե իր անուն վրանիկ առած և զայն տարածած լինիք, նա չպաշտպաներ։ Ներսես համոզվեցավ, կամ այդպես ձևացուց թե համոզվեցավ, և գնաց։ Բայց վերջերս այնպես՝ կը լսեմ, որ դարձյալ «Արմենական» կուսակցություն անունով կը շարունակե եղեր ներկայանալ միամիտներին առջև և այդպիսի կեղծ անունով մը շարունակելով իր գործունեությունն, խաբել դյուրահավատները։

Գիտեք որ ես Հնչակյաններն և Դաշնակցականների վնասակար գործունեությունները քննադատած եմ, չնայելով որ առով շատ մը թշնամիներ ունեցած եմ. բայց եթե Հնչակյան մը կամ Դաշնակցական մը լավ բան մը անե, չեմ վարանիր գովել զայն. անունին չեմ նայիր ես, այլ գործին։ Ուստի Արմենիայի համակրությունն ունենալու համար հարկ չկա Արմենական կոչվելու, այլ կանոնավոր օգտակար կերպով պետք է գործել։ Հնչակյանների սխալավոր թերությունն այն եղավ, որ չուզեցին նախապես ուսումնասիրել այն երկիրը որի համար գործելու, որի պահանջները ներկայացունելու հավակնությունն ունեին։ Հնչակյանի մը գեղագիր տալե առաջ պետք է անոր վիճակը, անոր հիվանդության ինչ լինելը զննել և իմանալ։ Հնչակյանությունը կազմակերպող երիտասարդներն Եվրոպայի մեջ փոքր ի շատե ուսում առած, բայց Տաճկահայաստանը ճանչցած չլինելով, կարծեցին թե Եվրոպայի հեղափոխականներն ինչ պահանջներ որ ունին և ինչ կերպով որ կը գործեն, Հայաստանի համար ալ նույն պահանջներ պետք են և հեղափոխությունը միևնույն միջոցներով պետք է գործել հոն ալ և հայկական դատը ընկերվարականության խնդրին հետ միացուցին. մինչ մեզնե շատ ու շատ առաջացած Եվրոպան ու Ամերիկան դեռ չեն կրցած ունենալ և նույն իսկ իրենց մեջ եղբակցության մը գալուն կրցած, այդ խնդրին օրինավոր և գործնական լուծում մը տալու համար դեռ երկարորեն վիճաբանության մեջ կը գտնվին և որոշ

ծրագրի մը հանգած չեն, մեր Հնչակյաններ կը վարդապետեին սոսիալիզմի դրություն մտցնել Հայաստանի վարչության մեջ և այլն...

Իհարկե ասոնք տեսությունների տարբերություններ են, յուրաքանչյուրի ապրած միջավայրների տպավորություններեն գոյացած. հետևապես չպահանջվիր ամենքեն ալ որ միևնույն տեսություններն ունենան ամեն խնդրի վրա։ Կարծիքի ազատությունը կը պահանջե ծանր արժողությամբ (tolerance) վարվիլ հակակարծիքների հետ. միայն թե կարելի է պահանջել ամենքեն ալ, համակարծիք թե հակակարծիք, որ անկեղծ լինին և ուղղամիտ իրենց հարաբերությունների մեջ։

Շնորհակալ եմ Ձեր մարտ մեկի նամակով ղրկված թղթակցության համար, որի վերջին մասը (Ձեր ձեռքով գրված և Պարսկաստանի վերաբերյալ) հրատարակվեցավ Արմենիայի մեջ. իսկ ռուս-ճաբոնական[ի] մասին գրված նորություն մը չեր ներկայացուներ մեր եվրոպաբնակ և ամերիկաբնակ ընթերցողների համար։ Շատ շնորհակալ կը լինիմ, եթե հաճիք երբեմն թղթակցություններ ղրկել տեղային կյանքեն, պարսկական ե հայկական (այս վերջնի մասին ավելորդ կը համարիմ ըսել թե կուսակցական վեճերը գրգռել չենք սիրեր)։ Պարսկաստանի տնտեսական, քաղաքական, առևտրական, կրթական են. վիճակին վրա տեսություններ։ Ինչպես հայտնի է, մենք հայերին պարսիկ կառավարության հետ բարեկամական վարմունք մ'ունենալը օգտակար կը համարենք մեր ազգային քաղաքականության համար։

Ընդունեցեք հարգանքներիս հետ սիրալիր բարևներս։

Ձեր
Մ. Փորթուգալյան

3. Գ.* Ամուսինս և քույրս հարգանքով կը ղրկեն իրենց բարևներ Ձեզ, Ձեր զոքանչ Տիկին Շիրակյանին, նույնպես նաև Տիկին Աստղիկ Շահգալտյանին։

3. Գ.** Արմենիան կը շարունակեմ նվեր ղրկել տեղիդ Ազգ. ընթերցարանին։ Կը հուսամ թե անարգել կը ստացվի։ Փոխադարձ բարևներ Տիար Ալեքսան Տեր Վարդանյանին։ Այսօր ղրկեցի նաև մի քանի կտոր գիրքեր (Փորթուգալյան հրատարակություններ) նվեր Մարաղայի Ձեր այդ ընթերցարանին։

---

* Գրված է առաջին էջի լուսանցքին—Հ. Փ.։

** Գրված է երկրորդ էջի լուսանցքին—Հ. Փ.։